

ԱԶԱՏ ԽՕՍԲ

ՏԵՏՐ 7

1902 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱԼԵԿՍԱՆԴՐՈՍ

ՆՈՐ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Վսեմ. Պօղոս փաշա Նուպար թէ՛ Խնամակալութեան եւ թէ՛ Ս. Առաջնորդին ուղղած նամակներով հրաժարած էր վերջնականապէս Խնամակալութեան ատենապետի պաշտօնէն: Խնամակալութիւնը նկատողութեան ատենելով սոյն հրաժարագիրները պարտք համարած էր միաձայնութեամբ մերժելու եւ իր որոշումը հաղորդած Նորին Վսեմութեան:

Պօղոս փաշա հեռագրով պատասխանած է թէ՛ շատ զգածուած ըլլալով հանդերձ իր մասին ցոյց տրուած համակրանքի այդ նոր արտայայտութենէն՝ հրաժարականը անդառնալիօրէն տուած է:

Բնականաբար Խնամակալութիւնը պիտի ստիպուի տեղի տալ, այս անգամ, Նորին Վսեմութեան անդրդուելի որոշման առջեւ եւ պիտի ընդունի հրաժարականը:

Արդ, Պօղոս փաշայի հրաժարմամբ նոր կացութիւն մը կը ստեղծուի զոր կ'արժէ քննել լրջօրէն:

Արդի Խնամակալութիւնը, որ քանի մը ամիսէ ի վեր կը վարէ Ալեքսանդրիայի Հայ հասարակութեան գործերը, եւ — փակագիծի մէջ ըսենք — նախորդէն

չատ աւելի գոհացուցիչ կերպով, սահմանադրականներու աչքին բոլորովին ապօրէն է իր կազմութեամբ:

Ալեքսանդրիայի Հայ ժողովուրդը, որ ա՛լ Սահմանադրական է, այս բանը հաստատեց թէ՛ եկեղեցիի շրջափակին մէջ ըրած ցոյցովը, թէ՛ Բերամիտ թատրոնին պատմական մեծ Միթինկովը եւ թէ այն բողոքագրով զոր խումբ մը ազգայիններ ուղղեցին Պատրիարքարան:

Այսուհանդերձ, ներկայ ինամակալութիւնը մինչեւ հիմակ կ'աւելնէր նեցուկի մը, թէեւ խիստ խարխուլ, որ օրինաւորութեան ստուեր մը կուտար իրեն, գոնէ ոմանց համար: Այդ նեցուկն էր սա կրկու պարագաները .

Առաջին : Ժողովուրդը, քուէարկութեան ժամանակ, միահամուռ ընտրած էր Վսեմ. Պօղոս փաշա Նուպարը. տեսակ մը թիպիսիք էր ասիկա որով բացառիկ դիրք մը կ'առնէր Նորին Վսեմութիւնը եւ իր մասին ցոյց տրուած այդ բացարձակ վստահութիւնը կրնար մասամբ արդարացնել, գոնէ հանդարտասէրու աչքին, այն կամայական որոշումը որով Պօղոս փաշա լուծեց ժողովրդին քուէով ընտրուած Թաղական ինքնուրջը եւ անոր տեղ կազմեց ինամակալութիւն մը:

Երկրորդ : Պատրիարքարանն ալ, ազդուած Պօղոս փաշայի վայելած ժողովրդականութենէն, որ աւա՛ղ շատ կարճատեւ եղաւ, կարծեց թէ Ալեքսանդրիայի Հայ ժողովուրդը փաշային մասին ունեցած համակրանքէն ու մեծ վստահութենէն ձեռնթափ եղած՝ պիչրողորդէր Նորին Վսեմութեան ատենապետութեան տակ կազմուած կամայական ինամակալութեան մը դէմ, հետեւաբար պաշտօն տուաւ Պօղոս փաշայի կազմելու՝ առժամապէս՝ ներկայ ինամակալութիւնը :

ժողովրդին բոլորապէս և Պատրիարքարանին որոշումը. ահա՛ այն երկու նեցուկները որոնց յինձ էր մինչև երբևէ Ալեքսանդրիայի հնամակալուծիւնը, օրինաւորութեան ձեւ մը տալու համար իր գնացքին:

Արդ, այդ ամէնը, ինչպէս տեսանք, հիմնուած է մի միայն Պողոս փաշայի անձին վրայ: Այն վայրկեանին որ Պողոս փաշա կը հրատարի իր ատենապետի պաշտօնէն, իրեն հետ կը ջնջուին բոլորապէս և պատրիարքարանին որոշումը և հնամակալուծիւնը կը կորսնցունէ օրինաւորութեան այն շոշորթը որ կը կրէր իր վրայ:

Իրօք՝ կրնանք ըսել որ Պողոս փաշայի քաշուելովը հնամակալուծիւնը գոյութիւն չունի:

Պողոս փաշան այն վէճն էր որուն վրայ կառուցուած էր հնամակալուծեան շէնքը: Վէճը երբ կը խախտի իր տեղէն բնական է որ շէնքը ինքնին կը քայքայի:

Ի՞նչ է այժմ հնամակալուծեան առաջին ու միակ պարտականութիւնը. — հետեւիլ Վսեմ. Պողոս փաշայի օրինակին և իր հրատարականը տալ Ս. Առաջնորդին:

Եւ ի՞նչ է Ս. Առաջնորդին պարտականութիւնը. — ընդունիլ սոյն հրատարականը ու անմիջապէս ձեռնարկել քուէարկութեան և օրինաւոր թաղական հորհուրդ մը կազմել:

Անձի խնդիր չէ որ յարուցանել կ'ուզենք, այլ սկզբունքի:

Այժմեան հնամակալուծիւնը մեծաւաստութեամբ կազմուած է այն անձերէն որոնք արդէն ժողովրդին քուէներով ընտրուած էին, բայց ընտրուած էին իբրև թաղական և ո՛չ թէ խնամակալ: Մեր փափաքն է թաղական տեսնել զիրենք:

Վստահ ենք որ նոր քուէարկութիւնը ստաջուանին պէս նպատակ պիտի չունենայ տապալել իշխանութեան վրայ գոնուող մարմինը, այլ ընդհակառակը նպատակ պիտի ունենայ զայն աւելի հաստատուն հիմերու վրայ դնել, օրինաւորութեան կնիքը դրոշմելով անոր: Հաւանական է որ մաքրագործում մը կատարուի եւ ժողովուրդը դուրս նետէ մէկ երկու հոգիներ որոնց մասին արդէն իր դատավճիռը տուած էր Մարտի ընտրութեան ատեն: Ասով աւելի համերաշխ մարմին մը պիտի ունենանք ազգային գործերուն զլուխը եւ պիտի վերջ գտնէ առաջնորդարանին մէջ ժամանակէ մը ի վեր սեղի ունեցած հակառակութիւնները:

ԱՆՍԵՂ ԿԱՏԱԿԻ ՄԸ ՇԵՏԵԱՆՔԸ

Ազատ խօսքի նախորդ տետրին մէջ ֆանթէզի մը գրած էինք «վերջնաշխարհ վերնազրով: Մեր մըտքէն երբեք չէր անցած վերաւորել այն անձերը որոնք ներկայացուցած էինք, սակայն կ'երեւայ որ ամէնքն ալ վերաւորուած զգացեր են ինքզինքնին ու անաբոյրքի տարափ մըն է որ թափեցաւ մեր վրայ: Պարտք կը զգանք այս առթիւ մեզ զրկուած նամակները ամբողջութեամբ հրատարակել, յուսալով որ այս կերպով գոհացում տուած կ'ըլլանք պատուարժան նամակագիրներուն:

«Ազնիւ պաշտօնակից,
ի՞նչ վնաս ունի իմ նառկիլէս ձեր զէպիպին որ
ծաղու անարկայ մը կ'ընէք զայն ձեր զբօսասէր ըն-

Թերցողներու (1) առջև: Տիգրան Երկաթի կենսա-
գրութիւնը պիտի սկսի քիչ օրէն, վստահ եղիք, եւ
պիտի աւարտի վերջնաշխարհէն առաջ, հաւանականա-
բար:

Սմբատ Բիւրատ

Պարոն,

Ինամակալ եմ եւ խնամակալ պիտի մնամ. **J'y
suis, j'y reste:** Գրեցէ՛ք ինչ որ
կ'ուզէք:

Զարեհ Սըվազը

Յարպելի Տ. Օտեան

Ապրիլ մէկը բաւական չեղա՞ւ:

Երուանդ Պոյաճեան

Նախկին բարեկամ,

Ինչպէ՞ս կ'երեւակայէք որ ինձ նման բարոյա-
կան ու երկիւղած անձ մը ձեզ նման անբարոյական
ու անկրօն մէկու մը հետ զեպիպ խմէ: Գիտցէ՛ք նաեւ
որ զեպիպ խմելու համար ընկերի պէտք չունիմ:

Լեւոն Մկրտիչեան

Սիրելի բարեկամ,

Սպիացած վէրք մը ի՞նչ պէտք կար բանալու
կրկին: Կարծեմ կրնայիք ձեր սրամտութիւնը (!) լա-
ւազոյն կերպով գործածել:

Միքայէլ Կիրճեան

(1) Չեմք գիտեր ինչո՞ւ Պ. Սմբատ Բիւրատ գրաս-
տեր կ'անուանէ Ազատ Խօսքի ընթերցողները, մինչ
քաղցնազբաղ կամ անփոյր մակդիրը կուսայ իրեններուն:

Մուշու Էրվանթ Օտիան,
Ազատ հօսք բէսալէյի բէղիլէսիինն ալթընձը
նիւսխէսիինի օխուաում: Փրօթէսթօ խտէրիմ:

Գրիգոր Մեղրոնեան

Յարգելի Տ. Օտեան

Երբեք չենք ներեր ձեզի որ նոյնիսկ անմեղ կա-
տակի ձեւին տակ թեթեւօրէն վերաբերիք դէպի ազ-
գային Սահմանադրութիւնը: Գլուխնիդ բացէ՛ք եւ
ապա բերան առէ՛ք այդ տեսակ սրբազան բառեր:

Յ. Շնորհքեան

Ե. Թուրչուձեան

Տ. Մ. Գալֆանեան հման իր նամակը գրած էր
պարսկերէն լեզուով, դեռ մինչեւ հիմակ չկրցանք
թարգմանիչ մը գտնել իմաստը հասկնալու համար:

Եւեղկատակ պարոն,

Եթէ դուք դիւ յարմար կը գտտէք խնդիրը ա-
նուշ տեղը կապելու համար, եւ ալ ձեզ յարմար կը
դատեմ յիմարանոցը կապելու համար:

Տօք. Էնֆիէձեան

Պարոն,

Աւելի աղէկ է վարպետ թավու խաղացող մը
ըլլալ քան ձեզ նման համբակ գրող մը:

Լեւոն Պէրպէրեան

Օտեա՛ն

Եթէ կրնաս «Արշաշոյս»ի յօդուածներուն պա-

տասխան տո՛ւր, փոխանակ իմ անունս Ազատ Խօսքին
մէջ անցնելու . . . :

Պետրոս Պէրպէրեան

Միրելի Միւսիւ Երուանդ,

Մի՛ կարծեր որ Վեռն Մկրտիչեանի հետ ունե-
ցած առկախ հաշիւս մինչեւ վերջնաշխարհին պիտի
ձգեմ կարգադրելու համար: Ձեր կարծածէն շատ ա-
ռաջ այդ հաշիւը պիտի կարգադրուի:

Միհրան (Պանքայի)

Ծօ՛ Օտեան

Կետարիոյ խորթ զաւակը անո՛նք են. ես հարա-
զատ եմ, պիտցա՛ծ եղիր:

Օննիկ Թաշճեան

Տ. Ե. Օտեան

Ճառ խօսելու համար բազմութեան պէտք չու-
նիմ: Առանձին եղած ատենս ալ սեղանին վրայ կ'եւ-
լեմ ու կը խօսիմ: Փափաքելի էր սակայն որ աւելի
յարգանքով խօսէիք մէկու մը վրայ որ իր մէկ քանի
կողմերովը մեր բացակայ ու սիրեցեալ փաշան կը յի-
շեցնէ:

Արթին Խաղիկեան

Մեծայարգ Տեար,

Դո՛ւք ալ զիս լրագիրը անցուցիք, ափերի՛ւն:

Բէօմիւրճի Պատուելի

Մեծ. Տ. Ե. Օտեան

Աղքատախնամի ուղղուած խնդրագրերները պատ-
ռելու համար վերջնաշխարհին սպասելու պէտք չեմ
զգար:

Նշան Ամատունի

Մեծ,

Տ. Երուանդ Օտեան

Աստ

Պաշտօնական գիրքս չի ներեր ինձ որ հրապարակաւ պատասխանեմ Ազատ խօսքի 6 ըդ տետրին մէջ ինձ նկատմամբ եղած ակնարկութեան : Սակայն պարտք կը զգամ նամակաւ գիտել տալ ձեզ թէ՛ փաստարանի վերարկուս վերջնաշխարհէն առաջ գուցէ պիտի տեսնէք եւ՝ հաւանականաբար՝ ո՛չ թէ Մէնչիէի հրապարակը, այլ որ եւ է դատարանի մը առջեւ, ուր պատիւ պիտի ունենամ ձեզի տալու այն դասերէն մէկը որ գիւրաւ չմոռցուիր :

Աս այժմ ընդունեցէ՛ք յարգանքներս

Միհրան Թէլեան

Պարոն

Թո՛ղ ինձի Լեւոն Նիզամեան չըսեն եթէ առաջին տեսնելու՝ ձեզ վերէն վար . . . չի չափեմ :

Լեւոն Նիզամեան

Սիրելի բարեկամ,

Դո՞ւն ալ այսպէս գիս կը հարուածես : Բու ըրածդ գիտե՞ս ինչի նմանեցաւ, պատմեմ եւ մտիկ ըրէ՛(1)...

Բարեպաշտ

Տ. Ե. Օտեան,

Նամակաւս կուգամ իմացնել ձեզ թէ՛ այլեւս

(1) Բարեպաշտին պատկած առակը այնքա՛ն երկար է որ Ազատ Խօսքի էջերը անբաւական պիտի զան երբ հրատարակել ուզենի: Ասկի զատ, խօսքը մեջերնիս, պատկած առակն ալ բան մը չհասկցանի :

Ազատ Խօսք պիտի չձրուեմ. գլխերնուդ ճարը նայե-
ցէ՛ք այսօրուքնէ : Սա եւս ըսեմ որ եթէ կրկին ա-
նունս յիշատակէք, թերթն անգամ չեմ շարեր :

Գրաչար Սեդրակ

Հրատարակելով այս նամակները կը յուսանք որ
ցոյց տուած կ'ըլլանք մեր ուղղամտութիւնը եւ միան-
գամայն, ինչպէս ըսինք, գոհացում տուած կ'ըլլաք
վերահար արժանապատուութիւններու : Ասով ա'լ
փակուած կը նկատենք վերջնաշխարհի յարուցած մի-
ջադէպը :

ԵՍ ԱԼ ԿԵՍԱՐԱՅԻ ԵՄ

Եթէ բախտը չեմ ունեցած էրճիասի ստորտը
ծնելու, գոնէ կրնամ պարծիլ որ մեծ հայրս Մուսճու-
սուն աշխարհ եկած է : Մագուճով Կեսարացի եմ. եւ ե-
թէ երակներուս մէջ պատող արիւնը սարըալուծեն,
վստահ եմ որ հարիւրին տասը չէմէնլի բատարմա պի-
տի գտնեն մէջը : Այս յայտնութիւնը ընելու պէտք կը
զգամ որովհետեւ կը լսեմ որ պատուարժան հայրենա-
կիցներս ինծի դէմ զրգոտուած են, իբր թէ ես Կեսա-
րացիները ծաղրած ըլլամ :

Կեսարացիները ինծի դէմ զրգոտող եղած է մաս-
նաւորապէս այն նեհագաւոր գրէչը որ սա տողերը մրո-
տած էր «Արշալոյս»ի մէջ :

«Երուանդ օտեան, ադ վիժած դրագէտը, իր ա'յն-
քան պախարակելի ու պախարակուած յարձակումնե-
րովը Մեղքոնեան բարեհամբաւ տունին դէմ՝ եւ իր
ողորմելիօրէն անխմատ հեզութիւններովը դիպի
ընդհանուր Կեսարացիները, եւն,»

Կը տեսնէ՞ք անխիղճ դաւաճանը ինչպէ՛ս կը ջանայ բացարձակապէս սոււա խօսքերով ինձ դէմ հաննելու իմ սիրելի հայրենակիցներուս լեղէնը:

Եւ այդ խաբերայ արարածը չամ՛չնար յօդուածին տակ «Կեսարացի» ստորագրելու:

Ո՛չ, պարոն, Կեսարացի մը այդքան լրբօրէն սոււա չի խօսիր:

Կը հրաւիրեմ այդ կեղծ Կեսարացին որ «Ազատ Խօսք»ին մէջ տող մը գտնայ որ հեղինութիւններ պարունակէ դէպի ընդհանուր Կեսարացիները:

Ես միմիայն քննադատած եմ Մեղքոնեան եղբայրները եւ ոչ ուրիշ բան. ու քննադատած եմ ո՛չ թէ Կեսարացի ըլլալնուն համար, այլ որովհետեւ անբարոյականութիւն նկատած եմ իրենց զործաւորներէն բռնի դրամ առնել ու իրենց անունով նուէր ընելը ու այդ առթիւ իրենց ննջեցեալներու հոգուն ալ պատարագ ընել տալը: Այդ քննադատութիւնը պիտի ընէի Մեղքոնեան (հարազատք.՞) Վանեցի, Մշեցի կամ Ակնցի ըլլային:

Ես երկիւղած պատկառանքով կը յարգեմ յիշատակը այն Կեսարացիներուն որոնք Հայրենիքի համար մարտիրոսացան կախաղանին վրայ, բայց բոլոր ուժովս կը պախարակեմ Գրիգոր Մեղքոնեանը որ Պրիւսէի Հայասիրաց Քոնկրէին հեռագիր զրկելու առթիւ Ալեքսանդրիա կազմակերպուած Միթիոնիին համար չուզեց միլիոմ մը խալ վճարել եւ ձեռքէն եկածը ըրաւ որպէսզի վիժել տայ Միթիոնիը:

Այդ մարտիրոս հայրենասէրները բերել բաղձատել Մեղքոնեանի մը հետ, հայհոյանք մըն է իրենց յիշատակին դէմ: Ու այս է ըո՛ւն ամօթը, ըո՛ւն անբարոյականութիւնը:

ԳԱՆՁԱՆԱԿԸ ՄԷԶՔԻՒՐ

Ինչպէս տեսանք Տ. Յ. Օհանեան իր առաջ բերած վկայութիւններով հաստատեց թէ՛

Ա. Մեղքոնեան (հարազատք ?) իրենց զործաւորներուն վրայ բռնի պարտք դրած են իրենց ամառկանէն բան մը վճարելու սնտուկի մը որուն մէջ պոյացած գումարը կը ղրկուի իբր նուէր Կեսարիա հաստատուած որբանոցի մը:

Բ. Այդ նուէրը Պոլսոյ թերթերուն մէջ կը ներբողուի իբրև Մեղքոնեան եղբարց նուիրատուութիւն:

Գ. Ամէն տարի, այդ նուիրատուութեան ստիւյ, պատարագ կը մատուցուի Ս. Կարապետ վանքին մէջ Մեղքոնեան էֆէնտիներու ննջեցեալներու հոգւոյն:

Կարևոր պարագայ մը մտոցած էր սակայն Տ. Յ. Օհանեան:

«Արեւելք»ի պնակալէզը, Արամ Անտոնեան, կը գրէ.

«Մեղքոնեան էֆէնտիները սակէ քանի մը տարի առաջ, բարի եւ առողջ մտածումը ունեցած էին իրենց զործարաններուն մէջ աղքատաց օգնութեան սնտուկ մը հաստատելու, եւն»

Արդ, մենք ամենատոյգ աղբիւրէ կ'իմանանք որ այդ «բարի եւ առողջ» մտածումը ո՛չ թէ Մեղքոնեան էֆէնտիները ունեցած են, այլ իրենց պաշտօնեաներէն ոմանք: Այնպէս որ Մեղքոնեան (հարազատք ?) ո՛չ միայն կը շահագործեն իրենց զործաւորներու դրամը, իբրև իրենցը նուէր տալով, այլ կը շահագործեն իրենց զործաւորներու մտածումը, իբրև իրենց մտածումը ներկայացնելով զայն:

«Կեսարացի հայը հրէայ փերեզակ մը չէ», կը պատգամէ Կեսարացիի զիմակին տաղ ծածկուողը: Կ'ընդունինք: Բայց ինքն ալ պէտք է ընդունի որ Մեկքոնեանները իրենց համբաւաւոր Գանձանակով հրէայ փերեզակէ մըն ալ վար են:

ԱՐԺԱՆԱԻՈ՞Ր Թէ ԱՆԱՐԺԱՆ

Հասկցաք անշուշտ որ խնդիրը տիրացու Միհրան Ղաղարոսեանի վրայ է, որ օրուան հերոսը եղած է Ալեքսանդրիայի մէջ շարաթէ մը ի վեր: Իր մասին երկու հանրագիր կը շրջի քաղքին մէջ ու կը ստորագրուի: Հանրագրիներէն մին քահանայ ձեռնադրուելու արժանի կը հռչակէ տիրացու Միհրանը, իսկ միւսը ո՛չ կը պոռայ: Քանի որ թաղական խորհուրդի խնդիր չունինք հիմակուհիմակ, զոնէ քահանայի իւրնգիր մէջտեղ դնենք առ այժմ, կ'ըսեն Ալեքսանդրիացիները: Մարդ պէտք է գոհ ըլլայ իր գաածովը: Ասկէ զատ երկարատեւ հանդարտութեան մը մէջ կրնանք տկարացնել մեր պայքարատէր բնոյթը որուն այնքան պէտք պիտի ունենանք յառաջիկայ ընտրութեան առտեն: Այսպէս ուրեմն, տիրացուի ներկայ խնդիրը առողջապահական պարզ մարզանք մըն է որ նպատակ ունի մեր կռիւի ջիղերուն զօրութիւնը պահպանելու:

Մենք կը կարծենք որ օգտակար միտայն կրնայ ըլլալ այդ սեռակ մարզանք մը, այսուհանդերձ կ'ուզէինք գիտնալ Տօք. Ս. Վ. Եզեկիէլեանի հեղինակաւոր կարծիքը: Միեւնոյն ժամանակ համակրելի տօքթօրը գուցէ մեզի կրնար ըսել թէ այն դրութեամբ որով ըստ փափաքին ծնողաց արու կամ աղջիկ զաւակ մը կա-

րելի է ունենալ, արդեօք կարելի չէ՞ նաև, անդա-
ռութեան հանճարեղ կերպով մը, որ եւ է տիրա-
ցու արժանի կամ անարժան ընել քահանայու-
թեանն թո՛ղ տօքթ. Ս. Վ. Եղեկիէլեան հաստատական
պատասխան մը հաճի տալ մեր հարցումին ու անա՛
լուծուած կ'ըլլայ տիրացու Միհրանի խնդիրը: Բայց
մեր մարզանքը, ո՞ւր կը մնայ մեր մարզանքը այն
ատեն: Է՛հ, ողջ ըլլայ լուսարարի խնդիր մը որ ան-
շուշտ պիտի չուշանայ ծագելու:

* * *

Ճշմարիտն ըսելու համար բաւական դժուար է
որոշել թէ՛ այս ինչ մարդը արժանի՞ կամ անարժան
է քահանայութեան:

Բազմութեան մէջ հարցուցինք թէ ի՞նչ պէտք է
մէկու մը որ արժանի ըլլայ քահանայութեան.

— Փառաւոր մօրուք մը, պիտի ըսեն շատերը:

— Բարոյակա՛ն ունենալու է:

— Բարոյականը կարեւորութիւն չունի, աղէկ
ախորժակ ունենալու է:

— Ուսումնական ըլլալու է որ շնորհքով քարոզ
խօսի:

— Ի՞նչ կ'ըսես պէ, ուսումնական ըլլայ 'նէ ան-
հաւատ կ'ըլլայ. ագէտ ըլլալու է որ ճշմարիտ հաւա-
տացեալ ըլլայ:

— Ատոնք պարապ խօսքեր են, քահանայ ըսածդ
աղուոր ձայն ունենալու է:

— Քահանայէն մէկ բան մը կը փնտոուի, խո-
նարհութիւն, որպէսզի ժողովուրդը զինքը սիրէ:

— Ընդհակառակը՝ հպարտ ըլլալու է որ ժողո-
վուրդը իրմէ պատկառի:

— Քահանան ապուշ ըլլալու է որ ժողովուրդը չխարէ:

— Քահանան խելացի ըլլալու է որ ժողովուրդը կառավարէ:

— Գէր ըլլալու է որ խորանին վրայ սպասուորած ատեն փառաւոր երեւայ:

— Նիհար ըլլալու է որ տուներնիս կերակուրի եկած ատեն շատ չուտէ:

— Առողջ ըլլալու է որ ասդին անդին կարենայ վազել ծուխերը հովուելու համար:

— Տկար ըլլալու է որ հիւանդին հաշիւ հասկընայ:

— Կոյր ըլլալու է որ կնիկներուն չի նայի ու փորձութեան մէջ չիյնայ:

— Խուլ ըլլալու է որ խոստովանանք եղած ատեննիս դիւրաւ թողութիւն տայ:

Հիմակ որ քիչ շատ ամէնուն կարծիքը լսեցիք, գտէ՛ք քահանայութեան արժանի մարդը որ կարենայ ամէնքս ալ գոհացնել:

Մենք՝ արժանաւոր քահանաներ կ'ուզենք, սակայն գիտէ՞ք որ քահանաներն ալ արժանաւոր ծուխեր կը պահանջեն:

Արդ, ինչպէ՞ս ըլլալու է արժանաւոր ծուխը:

Այս մասին հարցում ուղղեցինք մեր քահանաներէն մէկուն:

— Օրհնա՛ծ, պատասխանեց, արժանաւոր շէնք չնորհք ծուխ ըսածդ տարին գոնէ երկու անգամ մեռ-

ներու, վեց անգամ զաւակ ունենալու եւ ութը ան-
գամ ամուսնանալու է:

* * *

Եզրակացութիւն: Արժանաւոր քահանայ կը պա-
հանջէք, նախ արժանաւոր ծուխ եղիք:

ԱՌՍՁՆՈՐԴ ՄԸ ՈՐ ԱՌՍՁՆՈՐԴԻ ՄԸ ՊԵՏՔ ՈՒՆԻ

Անցած կիրակի Ալեքսանդրիայի Ս. Պօղոս Պետ-
րոս եկեղեցիին մէջ հոգեհանգիստ կատարուեր է ի
յիշատակ մեծանուն եւ ազգասէր Պատրիարքին՝ Ներ-
սէս Վարժապետեանի: Ոչ ոք տեղեկութիւն ունէր այդ
մասին, հետեւաբար եկեղեցին թափուր է եղեր բոլո-
րովի:

Բայց խնդիրը հող չէ:

Հոգեհանգիստը կատարուեր է անմահ հանգուց-
եալին եղբօրը խնդրանքին վրայ, որ ստիպուեր է
ժամերով սակարկել հոգեհանգստին գինը:

Եւ ի՞նչ հրեայի սակարկութիւն:

Տասը ոսկի պահանջեր են նախ ու յետոյ քաշ-
քշելով քաշքշելով երկու ոսկիի յարմարեր են Ս. Ա-
ռաջնորդին հետ:

Երկու ոսկի առնել Ներսէս Վարժապետեանի հո-
գեհանգիստը կատարելու համար. ահա՛ մեր Ս. Առաջ-
նորդին ամենէն փայլուն գործունէութիւնը Եգիպ-
տոսի մէջ:

Ա՛լ ասկէ ետքը կրնայ հանգչել իր դափնինե-
րուն վրայ:

Երբ Պօլիս երթայ ու Պատրիարքը հարցունէ.

— Ի՞նչ գործ տեսար Եգիպտոսի առաջնորդու-
թեանդ միջոցին:

Կրնայ բարձրագլուխ պատասխանել:

— Ներսէս Վարժապետեանին եղբայրը եկաւ, ինչդրեց որ իր եղբօրը համար հոգեհանգիստ կատարեմ ու ես ալ երկու ոսկի փրցուցի իրմէ:

Եւ սակայն կարելի չէ՞ հարցնել մեր Ս. Առաջնորդին որ եթէ այդքան նախանձախնդիր է եկեղեցիին շահուն, փոխանակ սպասելու Վսեմ. Բարթող Պէյի ազդու միջամտութեան, առաջին օրէն դադրեցնէր Վահրամ Վարդապետին պէս անպաշտօն ու անօգուտ եկեղեցեցականի մը ամսականը: Մանաւանդ որ Վահրամ Վարդապետ եկեղեցական ըլլալէ աւելի կալուածատէր է եւ կարող է իր առած ամսականին կրկինը նուէր տալ ազդին:

Ո՛վ Ս. Առաջնորդ, ինչո՞ւ առաջնորդ մը չեն առած ձեզ:



Եզիպտոսի համար հատը

ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂԶ

Սրտասահմանի համար հատը

ԿԷՍ ՖՐԱՆՔ

Ճամբու ծախքը մեր վրայ, մեր հասցէն է՝

YERVANT ODIAN

Poste Restante

(Egypte)

Alexandrie

ԳՐԵՑ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՏՊԱԴՐ. ՀԱՅԿ. ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՔՍ»
